

Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2
հիմնական դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա Սովորողների էկոլոգիական և վալեոլոգիական
դաստիարակությունը կենսաբանության դասավանդման գործընթացում:

Ուսուցիչ՝ Նվեր Հովակիմյան

Ղեկավար՝ Արմենուհի Գևորգյան

Բովանդակություն

1. Տիտղոսաթերթ- էջ 1
2. Բովանդակություն-էջ 2
3. Առաջաբան- էջ3 -4
4. Սովորողների էկոլոգիական և վալեոլոգիական դաստիարակությունը կենսաբանության դասավանդման գործընթացում: Էկոլոգիական դաստիարակություն:- էջ 5-9
5. Գործնական աշխատանք-էջ 10
6. Վալեոլոգիական դաստիարակությունը կենսաբանության դասավանդման գործընթացում: էջ 11-13
7. Գործնական աշխատանք էջ 14
8. Եզրակացություն էջ 15
9. Գրականության ցանկ էջ-16

Առաջաբան

Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից են բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը: Այդ հնարավորությունը ընձեռնում է << էկոլոգիա >> գիտությունը: Էկոլոգիա հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է գերմանացի հանրաճանաչ գիտնական Էռնեստ Հեկկելի կողմից և ներկայացվել է որպես գիտություն սեփական տան, կացարանի մասին: Էկոլոգիա հունարենից թարգմանաբար նշանակում է <<oikos>> տուն, կացարան, և <<logos>> - գիտություն: Մարդկության տունը Երկիր մոլորակն է, որն այսօր խնամքի և պահպանման կարիք ունի: Ընդհանուր տան գոյությունը պայմանավորված է <<բնություն-մարդ-հասարակություն>>: Մարդը հանդես գալով էկոհամակարգի մի մասնիկ, իր կործանարար գործունեությամբ նույնպես կարող է խախտել էկոհամակարգի հավասարակշռությունը: Այսօր երկիր մոլորակը կանգնած է էկոլոգիական աղետի եզրին և մեր ընդհանուր տանը կարող ենք փրկել բոլորս միասին: Այնուամենայնիվ մինչ այժմ մարդը չի կարող վերջնական պատասխան տալ բազմաթիվ հարցերի, որոնք վերաբերում են ոչ միայն իր էությանը այլև գոյությանը: Սա լիովին վերաբերում է նրա կյանքի և գործունեության հիմնարար ասպեկտներից մեկին՝ առողջությանը: Ռուս գիտնական Ի.Ի՝ Բրեխմանը վերջին ժամանակներից առաջիններից մեկն էր, ով խստացնում էր նոր գիտության հիմունքները զարգացնելու անհրաժեշտության խնդիրը և 1980-ին ներդրեց <<վալեոլոգիա >> տերմինը: Վալեոլոգիան մարդու առողջության մասին գիտելիքների մեջ գիտական ուղղություն է, կյանքի ապահովման, ձևավորման և պահպանման ուղիների մասին: Վալեոլոգիայի նպատակն է մարդու կենսագործունեության ժառանգած մեխանիզմների և պաշարների առավելագույն օգտագործումը և օրգանիզմի հարմարվողականության բարձր մակարդակի պահպանումը ներքին և արտաքին միջավայրի պայմաններին: Վալեոլոգիական կրթությունը և դաստիարակությունը պակաս կարևոր չէ էկոլոգիական կրթությունից և դաստիարակությունից: Նրանք երկուսն էլ փոխկապակցված են միմյանց հետ: Մարդ-բնություն փոխհարաբերության մեջ մարդու առողջությունը կախված է մաքուր և լավ պահպանված բնությունից: Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը ներկայիս ժամանակներում գոյապահպանման պահանջ է: Հատկապես պահպանելով բնությունը մարդը պահպանում է իր գոյությունը: Էկոլոգիական և վալեոլոգիական դաստիարակությունը շատ կարևոր է մոլորակի և մարդկության համար: Հասարակությունը կանգնած է աղետի առաջ, քանի որ բնությունը գնալով մահանում է, աղտոտվում է տարբեր արդյունաբերական տնտեսական թափոնների արդյունքում՝ մարդկությանը սպառնացող մի շարք հիվանդությունների պատճառ դառնալով: Այսօր մասնագետները կարևորելով

Էկոլոգիական և վալեոլոգիական կրփությունը, քազմաթիվ հետազոտություններ են կատարում: Կրթական տարբեր ոլորտներում՝ նախակրթարաններ, դպրոցներ, բուհեր, ներառել են էկոլոգիական կրթությունը, որի նպատակն է էկոլոգիական գիտակցություն ձևավորել: Այս խնդիրը հաշվի առնելով՝ դրա լուծումը պետք է սկսել վաղ տարիքից, քանի որ բնության նկատմամբ վերաբերմունքը, էկոլոգիական պատկերացումները պետք է ձևավորել դեռ նախադպրոցական տարիքում:

Սովորողների էկոլոգիական և վալեոլոգիական դաստիարակությունը կենսաբանության դասավանդման գործընթացում:

Կենսաբանությունն ուսումնասիրում է Երկրի ողջ կյանքի բազմազանությունը՝ բույսերի, կենդանիների, սնկերի, մանրէների, մարդու, բջջի կառուցվածքային և կենսագործունեության առանձնահատկությունները: «Կենսաբանություն» առարկայի ուսուցման նպատակն է՝

- ծանոթացնել կենդանիների բազմազանությանը, կենսագործունեության առանձնահատկություններին,
- ձևավորել և զարգացնել գիտելիքներ կենդանի - բնություն կապի, փոխներգործության մասին,
- ուսուցանել գիտելիքներ մարդու օրգան-համակարգային կառուցվածքի և ֆունկցիաների, ինչպես նաև սպառնացող հիվանդությունների մասին,
- ընդլայնել գիտելիքներն առողջ ապրելակերպի կանոնների, վնասակար սովորություններից զերծ մնալու (ծխել, ալկոհոլ, թմրանյութեր), վնասվածքների դեպքում առաջին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ,
- ուսուցանել և զարգացնել կարողություններ և հմտություններ ընդհանուր կենսաբանության մասին՝ կյանքի ծագման, կենդանի օրգանիզմների բջջային կառուցվածքի, ժառանգականության օրինաչափության, նյութերի և էներգիայի փոխանակության մասին,
- սովորողի մեջ սերմանել խելամիտ և հարգալից վերաբերմունք բնական միջավայրի նկատմամբ, նպաստել էկոլոգիական դաստիարակության և էկոլոգիական խնդիրների լուծմանը, ձևավորել
- կապ հաստատել բնագիտական այլ առարկաների հետ՝ իրականացնելով միջառարկայական փորձեր
- իրականացնել օտար լեզուների կիրառումը՝ բնագիտական նյութերի թարգմանության ընթացքում:
- ծանոթացնել կիրառական կենսաբանության ճյուղերի հետ՝ հատկապես ՀՀ-ում
- ստեղծել ուսումնական նյութեր:

Կրթությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու և մատուցված նյութը սովորողի սեփականությունը դարձնելու նպատակով կիրառվում են բազմաթիվ լաբորատոր - գործնական աշխատանքներ՝ շրջապատող միջավայրում գտնվող կենդանի օրգանիզմների զննում, դիտարկում, մանրադիտակային հետազոտում, ուսումնական ճամփորդությունների կազմակերպում: Ժամանակակից աշխարհում, երբ կյանքն ընթանում է աննկարագրելի արագությամբ, ամեն օր զարգանում է տեխնիկական և ներդրվում կյանքի բոլոր բնագավառներում, անկասկած, պետք է փոխվեն նաև դասավանդման մեթոդիկայի հետ կապված մոտեցումները, որպեսզի ուսուցիչը կարողանա ապահովել ուսուցման գերակա նպատակի իրականացումը: Դասավանդման մեթոդիկայի ճիշտ ընտրությունից է կախված դասի անցկացման արդյունավետությունը և նպատակային լինելը: Ներկայացնենք որոշ նորարարական մոտեցումներ, որոնք կենսաբանության դասավանդումը կդարցնեն էլ ավելի արդյունավետ, դասապրոցեսը կդարձնեն հետաքրքիր, ինչու ոչ, ժամանցային, աշակերտները ձանձրանալու կամ պարապության մատնվելու առիթ չեն ունենա: Կենսաբանության դասավանդման գործընթացում կարևոր է երեխաներին միաժամանակ ներկայացնել և՛ էկոլոգիական և՛ վալեոլոգիական կրթության նրբությունները, դրանց անքակտելի կապը կենսաբանության հետ:

Սովորողների էկոլոգիական դաստիարակությունը կենսաբանության դասավանդման գործընթացում:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակն է աճող սովորողներին ծանոթացնել բնության կարևորագույն օրենքները և այն ուղիները, որոնց միջոցով կարելի է պահպանել ու վերարտադրել բնությունը: Անհրաժեշտ է մանկական տարիքից նպատակաուղղված ձևով դաստիարակել պատասխանատվություն մեզ շրջապատող միջավայրի նկատմամբ: Իսկ դրա իրականացումը հնարավոր է հիմնականում սովորողների ճանաչողական գործընթացում, մասնավորապես երբ նրանք ծանոթանում են Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի տեսակներին: Դա կատարվում է ուսուցման և, ինչպես նաև սովորողների հետ հատուկ աշխատանքի՝ բնապահպանական միջոցառումների, ցուցահանդեսի, էքսկուրսիաների, ֆենոլեգիական դիտումների կազմակերպման միջոցով: Այստեղ անգնահատելի դեր ունի ուսուցիչը: Նա յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ դասը պետք է հարստացնի համոզիչ փաստերով հաղորդի բնության պահպանության վերաբերյալ: Բնապահպանական հասկացությունների ձևավորման և զարգացման աշխատանքը ուսուցիչը սկսում է կատարել բուսաբանություն (բույսեր) հենց առաջին դասերին (եթե հաշվի չառնենք տարրական ուսուցման ծրագրով նախատեսվածը): Դրա համար բնապահպանական հարցերի ուսումնասիրումը պետք է սկսել ոչ թե բույսերի պահպանությունից, այլ ,անթրոպոգեն գործոնների հասկացությունից: Անհրաժեշտ է մի քանի օրինակներով ցույց տալ բուսական հարստության օգտագործման մասշտաբները մարդկության կողմից (օրինակ՝ յուրաքանչյուր մարդու համար ամբողջ կյանքի ընթացքում անհրաժեշտ է միջինը 400% ծառից պատրաստված իրեր՝ սկսած լուցկուց մինչև կահույքը): Մարդածին գործոնները փոխում են առանձին բույսերի և բուսական համակեցությունների կյանքի պայմանները, կրճատում կամ ավելացնում են նրանց քանակը օգտագործման ընթացքում: Ահա թե ինչու մարդու յուրաքանչյուր գործունեություն, կապված բուսականության օգտագործման հետ. պետք է ուղեկցվի բնապահպանական գործունեությամբ: V դասարանի կենսաբանության դասընթացը որոշակի հնարավորություններ է տալիս բնապահպանական գիտելիքների ձևավորման համար՝ հենվելով բուսական օրգանիզմի, նրա կյանքի, բույսերի բազմազանության տեսակային համակեցությունների մասին հիմնական հասկացությունների վրա: Շ. Միմոնյանը և Ա. Լալայանը նշում են. որ ,մարդկային պատմությունը արձանագրում է բնության և հասարակության — պատմական զարգացման պրոցեսում գիտական գիտելիքների անընդհատ կազմավորում և մշակում, որոնք ի վերջո ձևավորվում են իբրև գիտության համակարգ է: Բնապահպանական գործունեությունը կախված է

կենսաբանական համակարգերի տարբեր խմբավորումների կառուցվածքի առանձնահատկությունների խմացությունից: Տերևի թեմայի ուսուցման ժամանակ պետք է պարզաբանել տերևի կառուցվածքը, ածխաթթու գազի և ջրի յուրացման կարողությունը, որպես ֆոտոսինթեզի կարևոր պայման: Աշակերտը պետք է ըմբռնի, որ տերևի վնասվածքը կարող է առաջացնել ֆոտոսինթեզի պրոցեսի անկում և նույնիսկ բույսի մահ: Այստեղ կարելի է տալ օդի աղտոտության ազդեցությանը կենդանի օրգանիզմի վրա (գործարանների, ավտոմեքենաների, հանքերի արտադատումներ): Ամենավտանգավորը ծծմբի և ֆտորի միացություններն են. որոնք տարբեր ծառատեսակներ կլանում են տարբեր ժամկետներում (կարճաժամկետ ազդեցության դեպքում կլանում է ավելի շատ կաղնին, քիչ՝ սոճին, ավելի քիչ՝ եղևնին, իսկ երկարատև ազդեցության դեպքում՝ կեչին, հետո սոճին և կաղնին): Ահա սա էլ հաշվի է առնվում քաղաքների կանաչապատման ժամանակ, ինչպես նաև հաշվի է առնվում ծառերի կայունությունը սնկային հիվանդությունների և միջատների հարձակման նկատմամբ (սրա մասին ուսուցիչը ավելի մանրամասն ուսուցանում է 7-րդ դասարանում ,Միջատների թեման անցնելիս՝ ստեղծելով նաև միջառարկայական կապ), անհրաժեշտ է աշակերտներին բացատրել, որ ծառերի որոշ հիվանդություններ զարգանում են բույսերի օրգանիզմի ամբողջականության խախտման հետևանքով: Այս նպատակով կազմակերպվում է էքսկուրսիա բնական միջավայրում ծառերի կտրվածքները, այրվածքները, հիվանդությունները դիտելու և համապատասխան բնապահպանական աշխատանք կատարելու մեծ է բույսերի տիեզերական նշանակությունը, կանաչ բույսերի միջոցով իրականանում է Երկրի և Արևի կապը: Բույսերը կլանում և յուրացնում են արևի էներգիան, ստեղծվում են կենդանի օրգանիզմները, այդ թվում նաև մարդը: Այս միտքը նպաստում է, որ աշակերտները հասկանան, յուրաքանչյուրը պետք է խնայողաբար վերաբերվի շրջակա միջավայրի բուսականությանը, պահպանի և վերարտադրի այն՝ որպես իր գոյության աղբյուրի: Դասընթացի վերջում կարելի է աշակերտներին հանգամանորեն ծանոթացնել բուսական համակեցություններին(անտառ, ճահիճ,տափաստան,մարգագետին, կիսաանապատ և այլն):Մարդկության պահանջմունքների անընդհատ աճը, բնականաբար բնական ռեսուրսների արագ սպառման պատճառ կարող են դառնալ: Դրա համար էլ մարդը պետք է իմանա, թե ինչքան և ինչպիսի բուսական հարստություն պիտի օգտագործի, որպեսզի չխախտվեն տեսակների և համակեցությունների հվերականգնման գործընթացները: Նպատակահարմար է որպեսզի այս այս թեմայի ուսուցումը կատարվի բնության գրկում էքսկուրսիայի ժամանակ, որի նպատակը կլինի կոնկրետ հավաքած նյութերի հիման վրա կատարելփաստերի ընդհանրացում:էքսկուրսիայի ընթացքում, երբ աշակերտները ընդհանուր գծերով ուսումնասիրում են բուսական համակեցությունները, դրանց տեսակային բազմազանությունը, ապա նպատակահարմար է առաջադրել հետևյալ հարցը՝ինչ կլինի եթե ոչնչանա բուսական համակեցությունը: Դրա բազմաթիվ

հետևանքներից բացի: Հարկավոր է նշել նաև տարբեր արժեքավոր նյութերի հարուստ աղբյուրների կորստի մասին: Ուսուցիչը պետք է ընդգծի, որ բուսական աշխարհի պաշարները առայժմ լրիվ բացահայտված և ուսումնասիրված չեն և արգելոցների արգելավայրերի ստեղծումը պայմանավորված է և դրանով, ն՛ բուսական համակեցությունների ու կենդանական տեսակների պահպանությամբ: Կենսաբանության դասավանդման նման ձևը նպաստում է ծրագրային նյութի յուրացմանը, գիտական գիտելիքների ձեռքբերմանը և ամրապնդմանը, էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացմանը: Բնության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի դաստիարակումը աշակերտների մոտ ձևավորում է էկոլոգիական աշխարհայացք, էկոլոգիական մտածողություն և էկոլոգիական կուլտուրա: Կենսաբազմազանության պահպանությունը հրատապ խնդիր է: Հայաստանի կենսաբազմազանությունը աչքի է ընկնում էնդեմիկ, ռելիկտային և հազվագյուտ տեսակների առկայությամբ: Աշակերտները պետք է պատկերացում կազմեն հազվագյուտ և անհետացող տեսակների նկատմամբ ձեռք առնվող միջոցառումների մասին:

Գործնական աշխատանք

1. Կենսաբանության դասաժամին դիտել ենք տեսանյութ Կլիմայի փոփոխությունների, դրանց թողած հետևանքների վերաբերյալ: Քննարկեցինք, որոշ հարցեր տեսանյութի վերաբերյալ: Քննարկեցինք, թե ինչ է կախված յուրաքանչյուրիցս, և ինչ կարող ենք անել, որպեսզի մինիմումի հասցնենք մարդու գործողությունների բացասական ազդեցությունը մեր շրջակա միջավայրի վրա: Ստորև ներկայացնում եմ տեսանյութի հղումը:

https://www.youtube.com/watch?v=vGnc1i4FE8U&ab_channel=SahakyantsAni

Կատարել ենք նաև արտադասարանական էքսկուրսիա Սալլի համայնք՝ «Ներքևի գյուղ» կոչվող հանդամաս, Եղեգիս գետի՝ Աղնջաձոր-Շատին վտակի մոտակայքում: Կատարեցինք ուսումնասիրություն: Քննարկեցինք մի քանի տարի առաջ եղած պատկերը, համադրեցինք այս պահին եղած պատկերի հետ: ամեն մի սովորող արտահայտեց իր տեսակետը՝ թե ինչ քայլեր պետք է ձեռնարկենք ջրի պարբերաբար պակասելու դեպքում: Ինչ կարող ենք անել այն մաքուր պահելու, ձկների բազմացումը խթանելու հարցում:

1.2. Վալեոլոգիաական դաստիարակությունը կենսաբանության դասավանդման գործընթացում:

Վալեոլոգիայի ծագումը, որպես գիտություն, կայանում է հին ժամանակներում: Կանգնելով կենսաբանության, հիգիենայի և էկոլոգիայի խաչմերուկում, այս գիտությունը նպատակ ունի ուժեղացնել մարդու ֆիզիկական և հոգեկան առողջությունը... Մեր մեծ նախնիները՝ Սվվորովից մինչև Տոլստոյ, մի ժամանակ ապացուցեցին, որ առողջ ապրելակերպի սկզբունքներին հետևելը մեզ թույլ է տալիս ոչ միայն պահպանել բարձր աշխատանքային կարողություններ, այլև հիանալի զգալ առնվազն երեսուն, առնվազն հիսուն, առնվազն յոթանասուն տարի: Արդեն 20-րդ դարի վերջին «վալեոլոգիա» տերմինը առօրյա կյանք մտցրեց տեղական մասնագետ Ի.Բրեհմանը, ով նկատեց, որ մահացության աճը, որը զուգորդվում է անձեռնմխելիության ընդհանուր նվազմամբ, հանգեցնում է բնակչության առողջության լիակատար վատթարացման: Եվ այս ոլորտում ճգնաժամը կանխելու համար պետք է լուծվի առողջության գրագիտության պակասը: Սա էր առողջության ընդհանուր տեսության ստեղծման պատճառը, որը, բացի հիգիենայից և կենսաբանությունից, ներառում է այլընտրանքային բժշկության և փիլիսոփայական և կրոնական ուսմունքի սկզբունքները: Չնայած այն հանգամանքին, որ այս գիտությունը չունի մեկ տեսական հիմք, այսօր կան վալեոլոգիայի ինստիտուտներ, ընդհանուր առողջության տեսության վերաբերյալ գիտաժողովներ անցկացվում են ամեն տարի: Վերջերս գիտնականներն իրենց առջև նպատակ են դրել համապատասխան ուսումնական առարկա ներդնել դպրոցի ուսումնական ծրագրում: Այնուամենայնիվ, վալեոլոգիան արմատավորվում է մեր երկրում աստիճանաբար. Դրա պատճառն այս գիտության մասին տեղեկատվության պակասն է: Հայտնի է, որ բոլորը մարդը Երկրի վրա ունի մտավոր և ֆիզիկական հզոր ներուժ: Այլ բան է, որ Երկրի վրա աղետալի էկոլոգիական իրավիճակի պատճառով նրա ունակությունների մեծ մասը արգելափակված է: Արժեքը որպես գիտություն նպատակ ունի ապահովել դա վերականգնել մարդու միտքն ու առողջությունը ֆիզիկական պատրաստվածության, հավասարակշռված սնուցման և խառնվածքի միջոցով: Ընդհանուր առողջության տեսությունը նշում է, որ որքան լավ է մարդը ֆիզիկապես պատրաստված լինի, այնքան ավելի արդյունավետ է նա կարողանում դիմակայել արտաքին վիրուսային հարձակումներին, այնքան ավելի դիմացկուն է անձեռնմխելիությունը: Հետևաբար վալեոլոգիան նպատակ ունի բարելավել առողջությունը: առարկայի հիգիենայի, ճիշտ աշխատանքի և հանգստի ռեժիմի ուսուցման միջոցով, ֆիզիկական դաստիարակություն և ջերմաստիճանի հմտություններ, առողջ ուտելու կանոններ: Վալեոլոգիան և վալեոլոգիական մշակույթը, որպես կենսաբանական և բժշկական գիտությունների համադրություն այլ գիտությունների և մարդու գործունեության բնագավառների հետ, ոչ միայն ուղեցույց են առողջ ապրելակերպի, այլև ամբողջ փիլիսոփայության համար: Հիմնական

խնդիրը անհատական առողջության նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաև առողջության մշակույթի դաստիարակությունն անհատականության զարգացման գործընթացում: Այս գիտության հիմնական նպատակը՝ պահուստների և կյանքի մեխանիզմների առավելագույն իրականացում, բարձր մակարդակի պահպանություն, մարմնին արտաքին և ներքին միջավայրի պայմաններին հարմարվելու ունակություն: Վալեոլոգիական կուլտուրան ընդհանուր մարդկային մշակույթի մի մասն է, որը ենթադրում է մարդու հոգեբանական կարողությունների, առողջության պահպանման, վերահսկման և զարգացման մեթոդների վարպետության ինչպես նաև, այս գիտելիքը ուրիշներին տարածելու կարողության մասին: Վալեոլոգիական կրթությունը թույլ է տալիս սովորողներին զարգացնել ողջամիտ վերաբերմունք իրենց մարմնի նկատմամբ, օգնում է մշակութային և հիգենիկ հատություններ ներշնչել և օգնում է երեխային հարմարվել շրջակա միջավայրի փոփոխվող պայմաններին: Երեխաների մեջ վալեոլոգիական մշակույթ ձևավորելու համար անհրաժեշտ է հետևյալը՝ մարմնի բարելավման և առողջ ապրելակերպի գիտակցված մտածելակերպի նկատմամբ հետաքրքրության զարգացում, նրանց բարեկեցության և ուրիշների բարօրության համար անձնական պատասխանատվության մշակում: Այսպիսով վալեոլոգիական կրթության մշակույթի հիմնական նպատակն է օգնել սովորողներին առողջանալ, սովորեցնել թե ինչքան կարևոր է առողջությունը: Գիտության հիմնական խնդիրները ներառում են առողջության վիճակի և դրա պաշարների վիճակի ուսումնասիրություն և գնահատում, առողջ ապրելակերպի նկատմամբ վերաբերմունքի ձևավորում, առողջության ուժեղացում և պահպանում առողջության պահպանման միջոցով անձին առողջ ապրելակերպին ծանոթանալու միջոցով: Valeology- ն ունի նաև այլ գիտություններ, որոնք ուսումնասիրում են նաև պետությունը: Վալեոլոգիայի հետաքրքրությունների ոլորտը առողջությունն է և առողջ մարդը, բժշկության մեջ դա հիվանդություն է և հիվանդ մարդ, հիգիենայի պայմաններում դա կենսապայմաններն են և մարդու միջավայրը: Վալեոլոգիան բաժանված է անհատական սոցիալական: Անհատական վալեոլոգիան ուղղված է անհատի առողջության պահպանմանը և բարձրացմանը: Դա անձնական հիգիենայի, հոգեհիգիենայի, կարծրացման, ֆիզիկական գործունեության, ռացիոնալ սննդի և բուժման մեթոդների հասկացությունների համադրություն է: Հասարակական վալեոլոգիան հասարակության ֆիզիկական, հոգևոր, մտավոր, սոցիալական և տնտեսական առողջության ապահովումն ու պահպանումն է:

Վալեոլոգիական կուլտուրան ընդհանուր մարդկային մշակույթի մի մասն է, որը ենթադրում է մարդու գիտելիքներ իր ֆիզիոլոգիական, գենետիկական և հոգեբանական կարողությունների, առողջության պահպանման, վերահսկման և զարգացման մեթոդների վարպետության, ինչպես նաև այս գիտելիքը ուրիշներին տարածելու կարողության մասին: Վալեոլոգիական կրթությունը թույլ է տալիս

Երեխաներին զարգացնել ողջամիտ վերաբերմունք իրենց մարմնի նկատմամբ, օգնում է մշակութային և հիգիենիկ հմտություններ ներշնչել և օգնում է երեխային հարմարվել շրջակա միջավայրի փոփոխվող պայմաններին:

Գործնական աշխատանք

Կենսաբանության դասի ժամանակ կատարել ենք խմբային աշխատանք, դասարանը բաժանվել է 2 խմբի, քննարկել ենք ծխելու և ծխախոտի թեման:

Աշակերտները ընթերցել և ունկնդրել են ծխելու մահացու վտանգի մասին հոդվածներ տարբեր կայքերում:

Նրանք քննարկել ենք հոդվածները և կայքերում ու իրենց շրջապատում փորձել ենք ուսումնասիրություններ կատարել՝ պարզելու համար, թե ինչ վնասակար և այլ բացասական հետևանքներ կարող է ունենալ ծխելը մարդու օրգանիզմի կամ առհասարակ հասարակության վրա: Ամեն մի խումբն արտահայտել է իր տեսակետը ծխախոտի և դրա թողած հետևանքների վերաբերյալ, և փորձել փնտրել հնարավոր ուղիներ դրա վաճառքի և օգտագործման կանխարգելման համար: Ստացված տվյալների վերաբերյալ տանը պատրաստել են՝ ուսուցչի օգնությամբ PowerPoint ներկայացում: Սա հիանալի ուսուցողական նյութ կարող է հանդիսանալ բաց դասի համար:

Եզրակացություն

Այս ամենից ես հանգեցի այն եզրակացության, որ Կենսաբանությունն ուսումնասիրելով Երկրի ողջ կյանքի բազմազանությունը՝ բույսերի, կենդանիների, սնկերի, մանրէների, մարդու, բջջի կառուցվածքային և կենսագործունեության առանձնահատկությունները, շատ կարևոր է այդ առարկայի դասավանդման գործընթացում ներառել նաև էկոլոգիական և վալեոլոգիական գիտությունները, կիրառել դասավանդման մի շարք մեթոդներ և ավանդական և ժամանակակից, որպեսզի սովորողը ընդհանուր պատկերացում կազմի ընդհանուր կենսաբանության և դրա հետ անքակտելի կապ ունեցող գիտությունների մասին: Կրթությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու և մատուցված նյութը սովորողի սեփականությունը դարձնելու նպատակով կիրառվում են բազմաթիվ լաբորատոր - գործնական աշխատանքներ: Դասավանդման մեթոդիկայի ճիշտ ընտրությունից է կախված դասի անցկացման արդյունավետությունը և նպատակային լինելը: Դասավանդման մեթոդիկան շատ կարևոր է ժամանակակից դպրոցներում երեխաների կրթական աճը ապահովելու գործում: Առաջնորդվելով դասի պլանով, ելնելով աշակերտների ընդհանուր պատրաստվածության մակարդակից, ցանկություններից, դպրոցի տեխնիկապես ապահովվածության մակարդակից, կարելի է կազմակերպել նմանատիպ հետաքրքիր դասեր: Ուսուցիչը անընդհատ պետք է հնարի նոր միջոցներ, նոր մոտեցումներ, որպեսի նույն դասարանում տարբեր թեմաներ մատուցի միանգամայն նոր մոտեցմամբ, ինչպես նաև՝ մինևույն թեման տարբեր դասարաններում մատուցի նոր մոտեցմամբ, դա կնպաստի ոչ միայն դասավանդման արդյունավետության բարձրացմանը, այլև նաև՝ ուսուցչի ինքնապատրաստության մակարդակի բարձրացմանը: Ժամանակակից մեթոդներից բացի ավանդական դասավանդման մեթոդների կիրառումը ևս շատ կարևոր է: Լավագույն արդյունք ստանալու համար պետք է համադրել դասավանդման ավանդական եղանակները ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառման փորձի հետ: Կենսաբանությունն առարկան շատ մեծ հնարավորություն է տալիս ուսուցչին օգտագործելու դասավանդման միանգամից մի քանի մեթոդ, ավելի պատկերավոր դարձնելու սովորողի պատկերացումները կենսաբանության այս կամ այն թեմայի վերաբերյալ: Ուստի ինքներս մեզ վրա պետք է աշխատենք, անդադար ինքնակրթվենք:

Գրականության ցանկ

1. lib.armedu.am
2. Зверев И.Ф., Мягкова А.Н. “Общая методика преподавания биологии”, М., 1985г
3. Verzhilin N.M., Korsunskaya V.M. Կենսաբանության դասավանդման ընդհանուր մեթոդներ 1983 թ.
- 4 . Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն, Երևան, 2005թ
5. Ասատրյան Լ.Թ., Էկոլոգիական դաստիարակության հիմունքները, Երևան,
6. Ասատրյան Լ.Թ., Ավանեսյան Լ.Գ., Սահակյան Ա.Ս., Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում, Երևան, 2003թ
7. usum. am